

**ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Շուկայական տնտեսության պայմաններում արտադրության միջոցների սեփականության քաղաքականությունը ենթադրում է տնտեսական ազատություն բոլոր սեփականատերերի համար, որը տնտեսության կարգավորման շուկայական մեխանիզմի կարևորագույն սկզբունքներից է: Դրա հետ մեկտեղ հասարակության նյութական ու սոցիալական պահանջարկների բավարարման, երկրի բնական, աշխատանքային և մտավոր ռեսուրսների լավագույն օգտագործման, համապետական խնդիրների իրականացման շահերը պահանջում են տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտություն: Ահա թե ինչու, տնտեսական կառավարման համար կարևորագույն նշանակություն ունի տնտեսության պետական կարգավորման և տնտեսական ազատության ճիշտ գոգորդման սկզբունքը: Մեր կարծիքով այդ երկու, շատ կարևոր հասկացությունների, մեխանիզմների կիրառման գույակցման մեջ գերակայություն պետք է ունենա տնտեսական ազատությունը: Որքան լայն են տնտեսական ազատության շրջանակները, այնքան գործունե է նյութական շահագրգռվածությունը:

Տնտեսավարման հաջողությունները պայմանավորող գործոնները բազաթիվ են՝ բնական ռեսուրսների առկայությունը, գիտատեխնիկական ներուժը, հասարակական-քաղաքական իրադրությունը, պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը և այլն: Գործոնների մեծ քաղաքականության առկայության պայմաններում ամենարեքստ և բացարձակ ճշտությամբ կանխատեսել տնտեսական զարգացման ուղղությունը:

Հասարակական, այդ թվում և տնտեսական կյանքը զարգանում է ոչ ուղիղ գծով: Հասարակության մի տնտեսակարգից մյուսին անցնելը միանգամից չի կատարվում և պահանջվում է որոշակի ժամանակահատված, իսկ այդ ժամանակաշրջանի տնտեսությունը կոչվում է անցումային տնտեսություն: Անցումային տնտեսությունը ունի միջանկյալ բնույթ, այն մի վիճակ է, երբ հասարակությունը անցում է կատարում որակական մի աստիճանից մյուսին, որն էլ պահանջում է քաղաքական, տնտեսական, իրավական և սոցիալական համակարգերում կատարել արմատական վերափոխումներ:

Տնտեսական զարգացման գործընթացը ենթադրում է մշտական վերահսկողություն, մշակված և գործողության մեջ դրված ծրագրերի իրագործում, անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան փոփոխություններ:

Պետության հիմնական նպատակը մակրոտնտեսական կայունության ապահովումն է, որը հեռանկարում կապահովի կայուն տնտեսական աճ: Մակրոտնտեսական քաղաքականության առաջնային նպատակներից է գնաճի վերահսկումը: Սակայն, սա ինքնանպատակ չէ, այլ հանդիսանում է փաստացի և պոտենցիալ ձեռնարկատերերի վստահության մեծացման միջոցով մասնավոր ներդրումների խթանման եղանակներից մեկը: Դա հիմնավորվում է նրանով, որ շուկայական տնտեսության առաջին հենասյունը նոր մասնավոր ձեռնարկությունների ստեղծման ու զարգացման խթանումն է, որն էլ իր հերթին կնպաստի մի շարք սոցիալական խնդիրների լուծմանը: Կառավարությունը պետք է օգտագործի այնպիսի լծակներ, որոնք կնպաստեն դրամավարկային, ներդրումային և ֆիսկալ քաղաքականությունների իրագործմանը և ամբողջական պահանջարկի բարձր մակարդակ ապահովելուն:

Անցումային շրջանում ՀՀ տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչը դրամավարկային քաղաքականությունն է:

Չնայած, որ պլանային տնտեսության ժամանակ երկրում գործում էր ճյուղավորված բանկային ցանց, ըստ էության, ձևավորվեց մոր բանկային համակարգ: Արմատական փոփոխության ենթարկվեցին բանկային գործունեության պայմանները, միջավայրը, հետևապես փոխվեցին նաև բանկերի խնդիրները, գործունեության սկզբունքները, տրամադրվող ծառայությունները և գործառնությունները: Երկրում ընթացող սոցիալական և քաղաքական բարեփոխումների հակասական ընթացքը, քաղաքական լարված իրադրությունը, ֆինանսական համակարգի զարգացման հայեցակարգի բացակայությունը արգելակում էին բանկային համակարգի զարգացումը: Իրադրությունը ծանրանում էր նաև նրանով, որ այդ ամենը պետք էր կարգավորել որքան հնարավոր է կարճ ժամանակահատվածում:

Ներկայումս ՀՀ բանկային համակարգը դեռևս գտնվում է կայացման ընթացքում, որն այսօր արդեն ընթանում է ավելի արագ տեմպերով: Գրեթե լուծված են բանկային համակարգի գործունեության և բանկային օրենսդրության հետ կապված այն խնդիրները, որոնք առաջանում էին համակարգի ձևավորման սկզբնական փուլում: Սակայն տնտեսությունն ընդհանուր առմամբ կայացած չէ, ինչն էլ դրդում է անընդհատ կատարելագործելու արդեն իսկ գործող համակարգերի աշխատանքը: Արդյունքում առաջանում են բացեր, մոր խնդիրներ, որոնք պահանջում են հիմնավոր լուծումներ:

Բանկային և ընդհանրապես վարկային համակարգի հիմնախնդիրները առաջանում են այդ ոլորտի գործունեության տարբեր մակարդակներում: Տնտեսագիտական գրականության մեջ կա տեսակետ, որ դրանք կարելի է ներկայացնել երկու մակարդակներով՝ ստորին և վերին¹:

Ստորին մակարդակի խնդիրների թվին են դասվում բանկային համակարգի զարգացման, բանկի ենթակառուցվածքի, ժամանակակից բանկային տեխնոլոգիաների կիրառման, բանկային ծառայությունների մատուցման որակի բարձրացման և բանկային անվտանգության հետ կապված հարցերը:

Վերին մակարդակին բնորոշ հատկանիշ է ֆինանսական հաստատությունների հուսալիությունը և կայունությունը: Այդ նպատակին կարելի է հասնել, եթե լուծվեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ առաջին, ֆունկցիոնալ-կառուցվածքային բնութագրի օպտիմալացման խնդիրը և երկրորդ՝ Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի փոխադարձ կապի էլ ավելի կատարելագործումը: Դրան զուգահեռ առաջանում է մեկ այլ հարց՝ գործարար ակտիվության բարձրացման խնդիրը երկրի տարածքային բաժանման ներկա պայմաններում:

Համաձայն «Երկրի վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքի» ՀՀ տարածքը բաժանված է 10 մարզերի և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի: Նկատի ունենալով քաղաքական զարգացման գործընթացները, երկարատև շրջափակումը և մի շարք այլ խնդիրներ, որոնք ազդում են գործարար ակտիվության վրա, պետք է նշել, որ բանկային համակարգի զարգացումն ըստ մարզերի խիստ անհամաչափ է ընթանում: Բանկային գործը զարացած և կենտրոնացած է Երևանում և տնտեսապես ակտիվ մարզերի կենտրոններում՝ մասնավորապես Գյումրի, Իջևան, Մեղրի: Պետք է նշել նաև, որ գրեթե բոլոր բանկերը մասնաճյուղեր ունեն հանրապետության քաղաքներում, բայց դրանք լիարժեք բանկային գործառնություններ չեն իրականացնում՝ հիմնականում զբաղվելով կոմունալ վարձավճարների հավաքագրմամբ և որոշ սոցիալական վճարների տրամադրմամբ:

Ներկայումս բանկային համակարգի գործունեության կատարելագործման ուղիները ուղղակիորեն կապված են իրավական դաշտի, օրենսդրական նախաձեռնությունների հետ:

Դրանց թվին կարելի է դասել.

¹ Тосун Н. Г. "Банковское дело", банковское законодательство в Росс., : Опыт, проблемы, перспект, вы" М.1995

- բանկային օրենսդրության ուղղակի ազդեցության ուժեղացումը,
- բանկային օրենսդրության համադրումը բանկային գործին ուղղակի առնչվող այլ իրավական ակտերի հետ,
- բանկային համակարգը կանոնակարգող մոր օրենքների ընդունումը, հաշվի առնելով բանկային գործի միջազգային փորձը,
- օրենքով սահմանված դրույթներին համապատասխան՝ առևտրային բանկերի մասնավոր շահերի ոլորտում պետության միջամտության սահմանափակումը,
- բանկա-վարկային համակարգի կառուցվածքի և գործառնությունների, դրանց տարրերի և հիմնական հասկացությունների հստակեցումը:

Միայն հասարակության վստահության արդյունքում բանկային համակարգը կարող է իրականացնել իր հիմնական ֆունկցիաները՝ խնայողությունների հավաքագրում և վարկավորում: Բանկերը գործունեություն ծավալելու ընթացքում դիմում են որոշակի ռիսկերի: Նրանք պետք է հստակ որոշեն ռիսկի մակարդակը (աստիճանը), որպեսզի խուսափեն անհիմն ռիսկերից և կարողանան հավասարակշռություն պահպանել ռիսկայինության և շահութաբերության միջև: Ռիսկային գործարքների կանխատեսումը և դրանց իրականացումը թույլ է տալիս այլընտրանքային քայլեր մշակել և ընտրել ռիսկի նվազեցման կամ ֆինանսավորման առավել արդյունավետ տարրերակ:

Այսօր, առավել քան երբեք, բանկային գործունեությունը կապված է ռիսկերի կառավարման հետ: Սակայն, տնտեսական, գործնական, մեթոդաբանական փորձի բացակայությունը բերում է նրան, որ անբավարար հիմքի վրա են գտնվում ռիսկի կառավարումը և բանկային գործունեության վերահսկողությունը:

Առևտրային բանկերի կառավարումը, կամ բանկային մենեջմենթը, իրենցից ներկայացնում են պլանավորման, խթանման և վերահսկողության շղթա, որն անհրաժեշտ է բանկերի նպատակների ճիշտ ձևակերպման և իրականացման համար¹:

Այդ գործընթացը բաղկացած է 4 փուլերից.

1. նպատակների կոնկրետ ձևակերպում
2. դրանց իրականացման համար իրական պլանների մշակում
3. պարբերաբար հսկողության իրականացում աշխատանքի որակի և արդյունքների վրա
4. կանոնավորող, շտկող միջոցառումների ձեռնարկում պլանավորվող արդյունքներին հասնելու համար:

Առևտրային բանկերի հիմնական նպատակը հանդիսանում է առավելագույն շահույթի ստացումը: Բանկային գործը ունի որոշակի առանձնահատկություններ: Բանը նրանում է, որ բանկերը ֆինանսական շուկայում կատարում են միջնորդի դեր, որոնց եկամտի 90%-ը ձևավորվում է ներգրաված միջոցների հաշվին: Այսպիսով, որպեսզի գործառնություններ իրականացնեն և եկամուտ ստանան, բանկերը պետք է վստահություն վայելեն հասարակության շրջանում: Դրա հիմքում ընկած է բանկի հուսալիության և կայունության բարձր աստիճանը, որն էլ իր հերթին ստիպում է մտածել մեկ այլ նպատակի՝ ռիսկերի կառավարման մասին:

Ներկայումս գոյություն ունեն ռիսկերի կառավարման հետևյալ հիմնական մոտեցումները.

- գործընթացային մոտեցում, որը կառավարումը դիտարկում է որպես փոխկապված կառավարչական ֆունկցիաների անընդհատ ընթացք,
- համակարգչային մոտեցում, որը կառավարումը դիտարկում է որպես փոխկապված տարրերի ամբողջություն՝ ինչպիսիք են մարդկային ռեսուրսները, կառուցվածքը, խնդիրները և տեխնոլոգիաները, որոնք ուղղված են նպատակների իրականացմանը մշտապես փոփոխվող արտաքին միջավայրի պայմաններում,

¹ Мескон М.Х., Альберт М., Хедоур, Ф., "Основы менеджмента"

- իրավիճակային մոտեցում, ըստ որի ամենաարդյունավետ կառավարումը հիմնված է ներքին և արտաքին ազդակների վրա,
- տարբեր դպրոցների հեազոտությունների արդյունքում ձևավորված մոտեցումներ՝
 - ա) գիտական դպրոց,
 - բ) ադմինիստրատիվ դպրոց,
 - գ) մարդկային հարաբերությունների հոգեբանության դպրոց,
 - դ) քանակական դպրոց:

Ռիսկերի կառավարման գործում ծանրակշիռ դեր ունի ռիսկերի գնահատումը:

Բանկային փորձագետները հնարավորություն ունեն կիրառել գնահատման առաջադեմ մեթոդներ, ինչպես նաև տարբեր մեթոդներ համադրել միմյանց հետ՝ ավելի ստույգ արդյունք ստանալու համար: Վերլուծության սկզբունքների առավել արդյունավետ տարբերակ ընտրելու համար անհրաժեշտ է մշտապես ինֆորմացիա հավաքագրել հայրենական և արտասահմանյան բանկերի պրակտիկայում գործող գնահատման մոդելային մեթոդների ու սկզբունքների մասին, որոշել ռիսկերի գնահատման արդյունավետ չափորոշիչներ և պարբերաբար իրականացնել դրանց մոնիտորինգ:

Խոսելով Հայաստանի բանկային համակարգի մասին, հարկ է նշել, որ 2003թ-ից ԿԲ-ն կատարելագործում է ռիսկերի կառավարման ուղղությամբ կատարվող վերահսկողության աշխատանքները: Դրա շրջանակներում մշակվում և հրատարակվում են ձեռնարկներ, որոնք հնարավորություն կընձեռեն բանկերում վերստուգումներն այսուհետ իրականացնել ռիսկի վերահսկողության հայեցակարգով: Նկատի ունենալով, որ Հայաստանի տնտեսությունը համարվում է դեռևս չկայացած շուկայական տնտեսական համակարգ, խիստ կարևորվում է ռիսկերի գնահատման և կառավարման խնդիրը:

Մակայն, միայն ռիսկերի գնահատումը և կառավարումը չէ, որ ծառացած է բանկային գործի բարելավման ճանապարհին: Տնտեսության իրական հատվածում առկա են մի շարք օբյեկտիվ պատճառներ, որոնք խոչընդոտում են նաև բանկային համակարգի բնականոն զարգացումը: Դրանք են.

- Տնային տնտեսությունների խնայողությունների ցածր մակարդակը, կանխիկ դրամի և արտարժույթի նկատմամբ բարձր պահանջարկը: Այս հանգամանքը թույլ չի տալիս բանկերին իրականացնել տնտեսության ֆինանսական ռեսուրսների արդյունավետ վերաբաշխումը, որը շուկայական տնտեսության պայմաններում բանկային համակարգին վերապահված հիմնական խնդիրներից է:
- Ներքին խնայողությունների հաշվին բանկերի ներգրավված միջոցների կարճաժամկետ բնույթը և դրանով պայմանավորված տնտեսության կարճաժամկետ վարկավորումը: Բանկային համակարգի զարգացումը խոչընդոտող էական գործոն է հանդիսանում միջին և երկարաժամկետ ֆինանսական միջոցների սակավությունը:
- Տնտեսությունում ստվերային մեծ հատվածի առկայությունը: Ձեռնարկությունները իրենց գործունեությունը իրականացնում են շրջանցելով բանկային համակարգը, հաճախ չեն հայտարարագրում եկամուտները: Ինչը չի նպաստում վերջինիս զարգացմանը և տնտեսությունում ազնիվ մրցակցության ապահովմանը:
- ՀՀ տնտեսության դեռևս վնասաբեր գործունեությունը և առկա ռիսկերը, որոնք բանկերի մոտ զգուշավորություն են առաջացնում վարկավորման ժամանակ:

Այս բնագավառում վերջին տարիներին կատարված աշխատանքը ցույց է տալիս, որ ՀՀ բանկային համակարգի ձևավորման և զարգացման գործընթացը հիմնված է միջազգային փորձի ու զարգացման միտումների վրա, հաշվի առնելով անցումային փուլում գտնվող երկրների տնտեսություններին բնորոշ առանձնահատկությունները: Անցումային գործընթացի հիմնական ռազմավարական խնդիրների իրականացման շնորհիվ Հայաստանում առկա իրավիճակը

կարող է բնութագրվել որպես համեմատաբար կայուն: Սակայն, անցումը վերջնական դարձնելու համար անհրաժեշտ է մակրոտնտեսական քաղաքականությունը կրկին ուղղել տնտեսության զարգացման երկարաժամկետ ծրագրերին և գնահատել դրա արդյունավետությունը: ՀՀ-ում պետական տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի անցումային այս շրջանում երկրում առկա ռիսկային բազմաթիվ գործունեների մեղմացմանն ու ձեռնարկությունների ֆինանսական և արտաքին գործընկերների ձեռքբերման հարցում աջակցությամբ: Դա իրականացնելու համար հիմնական գործիքը, որպես միջնորդ, բանկային համակարգն է:

ՀԱՅԿ ԱՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԵՊՀ ղոցենտ, տ.գ.թ.

ԱՌՈՒԴՏԻ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Առաջնությունը գործունեությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններ ներառող փաստաթղթերում առկա այլ տեղեկատվության աուդիտի և աուդիտին հարակից ծառայությունների (աուդիտորական դիտարկում, համաձայնեցված ընթացակարգեր, կոմպլիյանցիա՝ տեղեկատվության հավաքում) իրականացումն է: Աուդիտորական գործունեությունն իրականացվում է աուդիտորական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Աուդիտը և աուդիտորական դիտարկումն աուդիտ իրականացնող անձին հնարավորություն են ընձեռում տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ ապահովելու իր հավաստիացումը, իսկ համաձայնեցված ընթացակարգերը և կոմպլիյանցիան այդպիսի հավաստիացում չեն նախատեսում: Աուդիտը աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության անկախ ստուգումն է, որի արդյունքում տրամադրվում է աուդիտորական եզրակացություն: Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է հնարավորություն ընձեռել աուդիտորին՝ կարծիք արտահայտելու այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Ընդհանուր առմամբ օրենքը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ ընդհանուր դրույթներ, աուդիտորական գործունեությունը և աուդիտը, իրականացնող անձը և աուդիտի ենթարկվող անձը, աուդիտորների որակավորման հիմնական դրույթները, աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորումը, աուդիտորական գործունեությունը կարգավորող լիազորված մարմինը, պատասխանատվությունը օրենքի պահանջների խախտման վերաբերյալ և անցումային դրույթներ:

Օրենքը աուդիտորներից պահանջում է լիցենզավորվել և կիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված աուդիտի ստանդարտները՝ հիմնվելով աուդիտի միջազգային ստանդարտների և Հաշվապահների միջազգային դաշնության վարքագծի կանոնադրի վրա: Օրենքով սահմանվում է նաև, որ աուդիտորական ընկերությունները աուդիտորական ծառայություններից բացի չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական որևէ այլ գործունեությամբ՝ բացառությամբ հաշվապահական հաշվառմանն առնչվող որոշակի գործունեության, ինչպիսին է ֆինանսական հաշվետվությունների կազմումը, հարկային և իրավական հարցերով խորհրդատվությունը և այլն: Միևնույն ժամանակ օրենքն արգելում է աուդիտորական